չոր նուէրներ է յատկացնում զանազան բարեգործական ու կրթական ընկերութիւններին։ Բացի արդէն հրատարակվածներից, ստացել են նուէր՝ 1000 ր. կանանց բարձր դասընթացքները, 1000 ր. ձրի ու էժան ճաշարանների ընկերութիւնը և այլն։

◆ Դեկտ. 5-ին մի յատուկ մասնաժողով է մեկնել Թիֆլիսից, անդրկովկասեան երկաթուղ. ցանկում՝ ընդունելու նորակառոյց Կարս—Սարիղամիշ երկաթուղին։

◆ Նոյեմբերին Բիբի-Հէյբաթում ստացվել է նաւթ 7.423.430 փութ, հին նաւթաբեր հողաբաժիններում—24.721.400 փութ, ընդամենը 32.144.830 փութ։

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Մօտ օրերս Բագւում, Արտիստական Ընկ. դահլիճում, Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան Բագուի ճիւղի դրամատիկ սեկցիայի Նախաձեռնութեամբ կը կազմակերպվի հանդիսաւոր երեկոյթ ի պատիւ վրաց բեմի յուշարար Միխէիլ Մարջանիշվիլիի, նրա բեմական

լիսում, ցնոր կարգադրութիւն։

◆ Իշխանազնուհի Թամար Վախվախիշվիլին գրել է մի պիէս, 4 գործ., «Գանաթլէբա» (Վերածնունդ) անունով, որի մէջ դուրս է բերված այր մարդու բռնակալութիւնը կին մարդու վրա։

## ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

### ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

*Արտիստական Թատրոն*

Ս. Պոլեակով «Հրեղէն օղակ» (Огненное кольцо), դրամա 5 գործ.։

Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան Թատրոնում ներկայացումներ տուող ռուսաց դրամատիկ խմբի բեմիսսեօր Ա. Տուպանօվը իր բենեֆիսի առիթով, դեկտ. 5-ին, ընտրել էր սկսնակ դրամատուրգ Պոլեակովի նոր պիէսը՝ «Հրեղէն օղակ» անունով, որ տակաւին չէ խաղացված մայրաքաղաքի բեմերի վրա, թէև մուծված է բեպէրտուարի

է նրան, իր և իր սիրված չափ ճանապարհի մէջտեղի արգելաւիթին...

Չորրորդ գործողութեան մէջ տեսնում ենք Ալեքսէյին նոր ընտանիք կազմած։ Կիրա Կոնստանտինովնան նրա մօտ է. երկու պօրինի եղբայրներ խաղում են իրար հետ և ուրախացնում պօրինի հօրը և մօրը։ Սակայն Ալեքսէյի սրտում զարթել է կասկած իր կնոջ մահվան առիթով։ Նա Կիրային պատմում է, թէ ինքը վաղը պաշտպանելու է մի կնոջ, որ մեղադրվում է թունաւորելու մէջ։ Կիրան զգում է, որ այդ հէնց իր պատմութիւնն է։ Սկսվում է երկուսի միջև ընդհիմախօսութիւն։ Ալեքսէյն այն կնոջը, որին պաշտպանելու է, խղճում է չափազանց. նա գիտէ, որ երդուեալ-ատենակալները չեն արդարացնի նրան իր գործած սոսկալի յանցանքի համար։ Նա խնդրելու է միայն վիճող վերաբերել, որպէսզի նա՝ մեղադրեալը բարձրանայ ընկած վիճակից և յետոյ գիտակցէ Աստուծոյ

ցիանտը արժանացաւ երկար ծափահարութեան և շատ ընծաների։ Մտածված և շնորհալի էր Կիրա Կոնստանտինովնայի դերակատար տ. Արգուտինսկի-Կօլօվսկայան։

Բեմադրութիւնը օրինակելի էր։ Միջարարները՝ փոքր ինչ երկար։ Թատրոնը համարեա լի էր։ Ե.

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Բանաստեղծութիւններ, Դ. Դեմիրճեանի, 1913 թ., հրատարակութիւն Կովկ. Հայոց Հրատ. Ընկերութեան։

II

Դեմիրճեանը իր արձակ գրուածքների մէջ ունի երկու պարզ, անպաճոյճ, տաղանդաւոր գրչով գրված պատկերներ, «Աշուղի հէքիաթը» և «Սրինգն ու ջութակը», որոնք շեշտում են երազական աշխարհի պարզեած ամոքումը, որ թշուառութեան ու հոգեկան տառապանքների մէջ կորած մարդկանց միակ մխիթարութիւնն է կազ-

ւիտենական այս պրօբլէմները Դեմիրճեանին աւելի պահում են նիւթական-իրական տեսակէտի շրջանում, քան մեթաֆիզիկական։ Պէտք է ասել, որ «Կեանքի տեսիլը» իր մտքի և երևակայութեան խորութեամբ, Դեմիրճեանի գլուխ-գործոցն է։

Սուրխաթեան

## ՄԱՄՈՒԼ

«Кавказъ» թերթի մէջ հետևեալն ենք կարդում.

Հաւաստի տեղեկութիւնների համաձայն, տպված հայ և ռուս լրագիրներում, երիտասարդ-թիւրքերի պարագլուխները բանակցութիւններ են վարում Դաշնակցութիւն կուսակցութեան հետ հայկական հարցի վերաբերմամբ։ Այդ բանակցութիւնների նպատակն է՝ լուսաբանել այն պայմանները, որոնցով հայերը հնարաւոր համարէին յայտնել, թէ վստահութեան

